№ 174 Հոկտեմբերի 2 (14) 1880 Հոկտեմբերի 2 (14) № 174

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Ծանուցագրերը դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փախուստի ճանապարհ:—Ներքին տեսութիւն: Նամակ Թէլաւից: Նամակ Պէլգիանդրապոլից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: «Սիրդ» լրագիրը հայերի մասին: Նամակ Թիւրքիայից: Նամակ Պարսկաստանից:—Ցայտարարութիւններ:

ՓԱԽՈՒՍՏԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Հեռագիրը մեզ լուր բերեց, թէ Ռ. Դուռը իր պատասխանի մէջ, որ հաղորդած է Կ. Պոլսի եւրոպական դեսպաններին, խոստացաւ համոզել ալբանցիներին զիջանել Դուլցինիոն Ազնուագորիային, և պարտաւորվում է վճռել յունաց հարցը երեք ամսվայ մէջ, իսկ հայոց հարցը չորս ամսվայ մէջ:

Այդ դարձեալ նոյն մթին, երկդիմի և նենգաւոր պատասխաններից մէկն է, որով Ռ. Դուռը սովորութիւն ունի միշտ խոյս տալ Եւրոպայի պահանջումների ուղղակի կատարելուց, փախուստի ճանապարհ գտնել և նոր դժուարութիւններ, նոր արգելքներ սարքելու համար ժամանակ վատնակել:

Ռ. Դուռը պարտաւորվում է հայոց խնդիրը չորս ամսվայ մէջ վճռել, բայց ի՞նչ կերպով, ի՞նչ բեֆորմեր պիտի մտցնէ Հայաստանում,— այդ մասին լռում է:

Ի նկատի ունելով թիւրքաց Հայաստանում կատարվող այժմեան անցքերը, շատ հեշտ է նախագուշակել, թէ Ռ. Դուռը այս չորս ամսվայ ընթացքում ինչ կերպով կը վճռէ հայկական խնդիրը:

Նա կուղարկէ Հայաստան, ինչպէս առաջ, կամիսարներ, կուղարկէ Հօբարդ փաշայի նման բարեկարգիչներ, ցոյց կը տայ, թէ աշխատում է վերանորոգութիւններ մտցնել,—բայց մի և նոյն ժամանակ քրդերին, թիւրքերին և ամբողջ մահմետական ամբոխը գաղտնի կերպով կը գրգռէ հայերի դէմ, և փոխանակ բարեկարգութիւնների, արիւն, կոտորած, աւերմունք կը տարածէ Հայաստանում: Ձորս ամիսը բաւական ժամանակ է այդ բոլորը կատարելու համար:

Եւ երբ Հայաստանը կը ծռախի արեան և կրակի մէջ, նա կը պատասխանէ Եւրոպային. իմ ժողովուրդը դեռ պատրաստ չէ. ես ամեն միջոցներ գործ դրեցի. Հայաստանում վերանորոգութիւններ մտցնելը առ այժմ անհնարին է, որովհետև մահմետական ամբոխի կրօնական զգացմունքը, թիւրքերի ազգային հպարտութիւնը վերաւորվում է հայերին առանձնաշնորհումներ տալու պատճառով:

Խոստանալ և չը կատարել—այդ թիւրքիայի վաղեմի սովորութիւնն է: Իսկ բարիք խոստանալ և չարը գործադրել—այդ պահանջում է նրա այժմեան ամենախարդախ քաղաքականութիւնը:

Հասկանալի է, որ Ռ. Դուռը ամեն տեսակ հնարներ գործ պիտի դնէ, որ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը գործադրութիւն չը գտնէ Հայաստանում: Նա շատ լաւ հասկանում է, թէ այդ յօդուածը ինչ տպաւորութիւն է պատրաստում հայերի համար:

Հայաստան բառը խիստ անախորժ տպաւորութիւն է գործում թիւրքիայի ջղերի վրա: Ռ. Դուռը բացարձակ կերպով յայտնեց հայոց պատրիարքին, թէ իր պետութեան մէջ Հայաստան անուանով երկիր չէ ճանաչում: Նա յայտնեց և Կ. Պոլսի եւրոպական դեսպաններին, թէ Հայաստանում բացառապէս վերանորոգութիւններ մտցնելու դիտաւորութիւն չունի, այլ պիտի մտցնէ ընդհանուր վերանորոգութիւններ ամբողջ Փորթայի մէջ: Ինչ են նշանակում այդ խօսքերը: Հատ պարզ է, որ Ռ. Դուռը չէ ցանկանում Հայաստանը դարձնել մի արտօնական երկիր, որպէս զի այդ երկիրը, իբրև մի որոշ մասին չառանձնանայ և չանջատվի իր պետութիւնից: Բականերան թեռակրողու իշխանութիւնների կազմելու պատմութիւնը, ի հարկէ, թիւրքիան շուտով մոռանալ չէր կարող:

Ը նայելով, որ հայերի նպատակը խիստ համեստ է, չը նայելով, որ հայերը ցանկանում են ունենալ մի քարտոր կառավարութիւն միայն և ազատվել մահմետականների մինչև այսօր գործ դրած դարաւոր բարբարոսութիւններից, այսու ամենայնիւ, Ռ. Դուռը չէ կամենում կատարել նրանց իրաւացի պահանջումները, որ ամեն մի փոքր ի շատ բարեկարգ պետութեան քաղաքացին իրաւունք ունի վայելելու:

Այդ բաւական չէ, այժմ թիւրքիան աշխատում է հայկական խնդիրը խեղդելու նպատակով ոչնչացնել հայ տարրը: Աշխատում է լցնել Հայաստանը քրդերով, չէրքեզներով, լազերով, աջարացիներով և այդ բոլոր վայրենի ցեղերի բարբարոսութիւնը գրգռել հայերի դէմ: Ռուսաց նոր նուաճած երկրներից գաղթող բազմութիւն մահմետականներին նա դնեցեղց Հայաստանի մէջ: Իսկ Եւրոպական թիւրքիայից դուրս եկող գաղթականների խումբերը նոյնպէս ուղարկում է դէպի Հայաստան:

Նպատակը յայտնի է և չորս ամիսը բաւական ճիգ ժամանակ է նրան իրագործելու համար...

Նշանները արդէն երևում են Վասպուրականի մէջ, որ Հայաստանի սիրտն է, նկատվում է քրդերի կատաղի յուզմունք, այրվում են գիւղեր, սպանվում են մարդիկ և ապատակութիւնը օրըստօրէ աւելի ընդարձակվում է, աւելի սպառնական ձև է ստանում: Տարօնի նահանգում նոյնպէս արիւն է հոսում: Սօլոկ-Բուլախի գաւառում Հէյլս-Իրագուլաշը, իր գլխին հաւաքած աւելի քան տասն հազար աւազակներ, վերտանց է ապառնում Շարպատուգանի հայերին: Հէ բարիի կողմերում Բահրի-բէկը, իր ցեղի գլուխն անցած, աւերմունքներ է գործում: Հին-Նայադէդի կողմերում Հէյդարանլի քրդերը կողոպտում են հայերին: Ամեն տեղ նկատվում են մի և նոյն չարագործութիւնները, որոնց կեղևի տակ թաղնված է թուրք կառավարութեան պաշտօնատարների նենգաւոր ձեռքը: Իսկ Կ. Պոլսի մահմետական մամուլը այդ բոլոր բարբարոսութիւնները բացատրում է քրդական միութեան անունով....

Ինչպէս պիտի վարվեն թիւրքիայի հայերը վերոյիշեալ բոլոր չարագործութիւնների դէմ:

Թիւրքիայի հայերը մինչև այսօր իրանց բոլորը յոյսը դրել էին դիւանագիտական բանակցութիւնների վրա, ամեն ինչ սպասում էին Եւրոպայից և իրանց փրկութիւնը միայն Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի մէջ էին որոնում: Բայց Անգլիայի պետական մարդիկներից մէկը, միստր Բրայս, այս օրերում խիստ ճիշտ կերպով նկատեց Կ. Պոլսի հայերին. «Աշխատեցէք չը ճանձրացնել Եւրոպային»....

Մենք կաւելացնենք հայասէր անգլիացու խօսքերին, ոչ թէ Եւրոպան, այլ Աստուած ինքը չի օգնի թիւրքիայի հայերին, եթէ նրանք ինքները իրանց օգնելու մէջ ծոյլ կը լինեն....

Թիւրքիան խոստանում է վճռել հայոց հարցը չորս ամսվայ մէջ: Դուցէ վճիռը նրանով կը վերջանայ, որ չորս ամսից յետոյ էլ Հայաստանում հայ չի մնայ....

Ե. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԷԼԱՒԻՑ

—

Սեպտեմբերի 22

«Մշակ»-ի 162 № մէջ Թէլաւից մի թղթակցութիւն եղաւ Մ. ստորագրութեամբ, որից ես այն եզրակացութեանը հասայ, որ պ. թղթակիցը բոլորովին անծանօթ է տեղւոյս դպրոցների, հոգաբարձուների և ուսուցիչների գործունէութեան հետ: Հոգաբարձուների մասին գրում է թէ՝ «անընդունակ և անշոյ են», բայց մի և նոյն ժամանակ մոռացել է այն, որ այդ հոգաբարձուներն են անփոփոխ-մշտական. իսկապէս տէր և իշխան մեր դպրոցների և գրանց ժողովուրդը չէ ընտրել: